

հաւարած եւ տպած «Ժողովածոյ...», գրքին գէմ: Վերջը՝ «Գրեցաւ եւ աւարտեցաւ սա որ կոչի «Խնդիր ուղղութեան», ի թուոյ Փրկչի 1725, ապրիլի 23, ձեռամբ Սարգիս Եպիսկոպոսի եւ դոկիացւոյ, որ եմ սահէթճի, ի սուրբ քաղաքն Հոռոմ, ի Վանս Հայոց, ընդ հովանեաւ Մարիամու եգիպտացոյն...:», Այստեղ Սարգիս կը ներկայանայ համարձակ, Ս. Աթոռէն արդէն վերահաստատուած իր եպիսկոպոսական աստիճանին մէջ: Այս գէպքերու պարագաները կարելի պիտի ըլլայ Ս. Աթոռոյ գիւաններէն տեղեկանալ:

Աւելի տեղեկութիւններ կը պակսին առ այժմ. սակայն շատ յուսալի է՝ որ այս գործունեայ բանասիրին ուրիշ գրութիւններն ալ գտնուին մատենադարաններու մէջ, որոնք կենսագրական ընդհատումները պիտի ամբողջացընեն:

Սարգիս իբրեւ կաթողիկէայ վախճանած է 80 ամեայ (ըստ լատին տապանագրին 100 ամեայ) ի Հոռոմ 18 Օգ. 1731ին: Լատիներէն եւ Հայերէն տապանագիրը ցայսօր կը կենայ Հոռոմ, կաթողիկէ Հայոց Ս. Մարիամ Եգիպտացի եկեղեցւոյ յատակն: Ահա օրինակն՝

D. O. M.

SUB HOC LAPIDE JACET SERGIUS DE CASPAR  
ARMENUS EPISCOPUS BETLEHEMENSIS  
OBIIT DIE XVIII AUGUSTI ANNO MDCCXXXI  
AETATIS SUAE C.